Ողջախոհ զոհին արիւնը ծանրացաւ Տարկուինիոսի գլխուն վրայ։ Թագաւորին թոռը, — որ յաջողեր էր մահէն ճողոպրիլ անխօս ձեւանալով, ու այս պատճառաւ Բրուտոս (անմիտ, անասուն) անունն առած էր, — միացաւ Լուկրետիայի ամուսին Կոլլատինոսի հետ և ապստամբութեան առաջնորդն եղաւ։ Ասոնց Ծերակոյտն ու պատրիկները վրէժխնդրութեան գրգռեցին՝ զոհին դիակը հրապարակ ցուցադրելով։ Խռովարարները գահազուրկ հռչակեցին Թագաւորը, ու Հռոմի դուռները փակեցին անոր առջև. սա բանակէն ալ լքուելով՝ ճարահատ իրեններով ի միասին գնաց իբր աքսորական՝ Ետրուրիայի Կերէ քաղաքը։ Այսպէս միապետութիւնը Հռոմի մէջ ջնջուեցաւ և հաստատուեցաւ հասարակապետութիւնը։ Այս կը պատահէր 510ին, ճիշտ այն ատեն որ Աթէնք Պիսիստրատեանց բռնաւորութենէն կ'ազատէր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ

Եթէ հին Հռոմի Թագաւորական շրջանին վրայ ճշգրիտ շատ տեղեկութիւններ չունինք, բայց ստուգապէս գիտենք Հռոմայեցւոց ապրելակերպը։ Ինչպէս տեսանք՝ երեք տարբեր ցեղեր, Լատինները, Սաբինացիներն ու Ետրուրացիները կը կազմէին հռոմէական պետութիւնը։ Իւրաքանչիւր ցեղ տասը կուրիաներու և ամէն մէկ կուրիան ալ նախնաբար տասն ընտանիքէ կամ տոհմերէ կը բաղկանար։ Հետևապէս ազնուական դասն 3 ցեղ, 30 կուրիա և 300 տոհմ կը պարունակէր։ Ցեղի մը գլխաւորը կը կոչուէր ցեղապետ, իսկ կուրիային գլխաւորը՝ կուրիոն, կուրիայի մարդիկը՝ կուրիականք։ Հռոմի բնակիչներն երկու դասակարգի կը բաժնուէին. անոնք՝ որ քաղաքացի էին, որ են Պատրիկները, անոնք՝ որ քաղաքացի չէին, որ է Ռամիկը։



Տիպարներ Հռոմուհւոյ և Հռոմայեցիի.

Շար.   Հ. Ս. ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ

ԱՐՄԷՆԻԱ Տէր Մ. Փորթուգալեան զմայլելի յարատեւութեամբ 1885էն ի վեր կը շարունակէ «Արմէնիա» թերթին հրատարակութիւնը։ Վաղեմի ազգային պատկառելի գործիչը, անվհատ հայրենասիրութեան աւիւնով վառուած, առիթը չի փախցներ՝ իր թերթին մէջ սեղմ իմաստներով պարզել այն ամէն լոյս և տեղեկութիւն՝ որ ստուգիւ հայ մտքին, հայ սրտին, հայ հոգւոյն կը պատկանին։ Տարեշրջանի մը բաժնեգինը 20 ֆրանք ըլլալով, պէտք է գրել

M. M. Portoukalian, Directeur du journal « A R M E N I A »

Place 17 Alexandre-Labadié   **MARSEILLE** (France)

digitised by A.R.A.R.@